

**ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԲ**

Ամսոյս 25 ին և 26 ին Գարոցական երկու Հանգէաներ կատարուեցան : Առաջինն էր ժողովուրդաց Վարժարանի Հանգէան , որ սահմանուած է միմիայն ՚ի միութարութիւն և առաւել ՚ի քաջալերութիւն Ուխտաւորաց , որպէս զի փոքր ՚ի շատէ դպրոցներու անհրաժեշտ կարեւորութիւնը զգալով երբ դառնան իրենց երկիրներն , դպրոց ունեցողներն աւելի յառաջ տանելու համար հոգ տանին , չ'ունեցողներն եւս ունենալու համար աշխատին : Հանգէսին մէջ , ուր ներկայ էին Ամեն . Ս . Պատրիարք Հայրը , Պատուարժան Ս . Հարք և մեծ բազմութիւն Ուխտաւորաց , կարգացուեցան երկու Հայերէն ճառ , աշակերտաց դաս առած աւարկաներէն այլ և այլ հատուածներ եւ մէկ գրուած տրամախօսական ոճով Աշխարհագրութեան ուսման կարեւորութիւնը բացատրող : Երկրորդն էր քաղաքիս Հայ օրիորդաց դպրոցի Պարգեւաբաշխութեան և ձեռագործաց վիճակահանութեան Հանգէան :

Առանց յիշեալ դպրոցական Հանգէաներն մանրամասնաբար նկարագրելու և մեր կողմէն գովեստներ կարգալու , արժան կը համարիմք կարգացուած ճառերէն մին հրատարակել , զոր խօսեցաւ Ժ.ս.ս . Վարժարանի Գասատու Բարեշնորհ Սարկաւազ Մէլքոն Յակոբեան Թրակացին :

**ԱՌԱՔԵԼԱՊԱՇՏՕՆ Ս . ՀԱՅՐ**

ԵՒ ՄԵԾԱՐՈՑ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Չեր սոյն համախմբութիւնը զիս կը բաջարէ , կը բռնադատէ վարկեան մի մտածել թէ ինչ գործանալի տեսարան է այս , ինչ իս ՚ի քաղաք գու-

մարում , որ երկար դարերէ ՚ի վեր խորամանկ յարձակումներով եւ անպատմելի հաղածումներով աշխարհիս տմեն կողմն ցիրուցան եղած վարատական և տարագիր Հայերն ՚ի մի վայր կը ժաղովէ և իրար կը միացնէ , որոց իւրաքանչիւրն ունի իւր բնական տեղոյն և կլիմային յարմար ձեւն ու տարազը , որոշ գաւառական բարբառն ու արտասանութիւնը և որոշ վարքն ու բարքը : Բայց կը շուարիմ թէ՛ արդեօք ինչ նիւթի վերայ և ինչպէս խօսիմ , որ ձեր ամենուն շահաւէտ եւ միանգամայն հասկանալի լինի :

Բայց ինչ նիւթ առաւել արդիւնաւոր և ուսումնասիրութեան առարկայ կարող է լինել մեզ նման պանդուխտ և վտարանդի ազգի համար , բայց եթէ մեր արժանայիշատակ նախնեաց պատմական կեանքն հետազօտել , նոցա անմահ յիշատակարանաց մէջ խոյղ և խնդիր լինել , նոցա օրինակելի արարքն ու սիրազորութիւնքն մատնանիշ առնել , աղգաչէն գործունէութիւնն ու հայրենասիրական քաջագործութիւնքն ՚ի հանդէս ածել , նոցա կենսագրութիւնը մեր կենցաղագրութեան հետ համեմատել , հինը նորին հետ բաղդատել , անցելոյն և ապագային վերայ մտածել . բրտնաջան տրքնութեամբ և արխաջան աշխատութիւն վստակիլ նոցա բարեմասնութեանց տիրանալ և աղգաչինութեան գեղեցիկ հանդէս բանալ :

Մեծարոյ հանդիսականք , թնղ չը կարծուի երբէք , որ Հայ ազգութիւնն ՚ի սկզբանէ անտի ներկայ ժամանակիս նման փառազուրկ և հայրենազուրկ եղած է և օտար աստղերու ներքեւ աստանդական թափառած :

Երբ հետաքննին ուշադրութեամբ ուսումնասիրեմք մեր անմահ նախնեաց պատմական կեանքը , երբ հետօխոյղ

և հորալորիք տկամբ ընթերցասիրեմք մեր ազգային նախրատն պատմութիւնը, ակն յայտնի կը տեսնեմք, որ Հայ ազգութիւնն ունեցած է գրախտանձօտ հայրենիք, արժեքաւոր ծագումն և խիստ ճշմանաւոր եղած է հին դարուց մէջ իւր հայրենասիրական քունն եւ անգեղամբ և անկախ ու ինքնօրին ազատութեամբ : Մերկայաբանաց կը տեսնեմք, որ մեր նախնիք կորստաբեր բռնութեան, մահածին գերութեան և պժգարի ստրկութեան անհաշտ թշնամի լինելով՝ իրբեւ ու զատուշունչ սրի ակոյցաններ զէն ՚ի ձեռին ընդ միշտ շահատակած են անպաշտնասպետութեանց և ազգաճինջ աշխարհակողմութեանց դէմ իրենց ազգութեան անկախ ինքնօրինութիւնը, Առաքելչարան Սուրբ Նիկիոցոյ պատմութիւնը և պաշտելի կրօնի փրկարար վարդապետութիւնը անարատ և հաստատուե պահպանելու համար : Այն, բացորոշ կը տեսնեմք, որ մեր ազգը խիստ պատկառելի եղած է ՚ի հնումն Արեւելից մէջ իւր համաշունչ միաբանութեամբ և ընդաբոյս կատարելութեամբք, ունեցած է աւարինի գահակալներ, քաղաքագետ և աշխարհաշէն իշխաններ, գիւցաղուն նախարարներ, եկեղեցաշէն հայրապետներ, ազգաշէն վարդապետներ, ընտիր քահանաներ, և շնորհալի ոտրկաւապներ, կրթեալ ու գառախարակեալ մտքեր, հայրենասէր նահատակներ, եկեղեցասէր մարտիրոսներ, ճշմարիտ սրբիներ, քաջարի զինուորներ, շահաւետ օրէնքներ, գեղեցիկ սովորութիւններ, հռչակաւոր շահատաններ, բաղմամարդ ոտաններ, անասիկ բերդեր ու քաղաքներ, և հայկական գրոջ իւր երջանիկ հովանայն ներքեւ կ'ամրապնդ Վասիլից ծովն մինչ ՚ի Պալեստին և Վսիլասեան լեռ

ներկն մինչ ՚ի Փոքր Ասիա գրաւող ընդարձակածաւալ տարածութիւնը : Այր տեսնեմք որ Հայք խաղաղասիրութեամբ կը թագաւորեն, իրենց միաբանական գործակցութեամբ հայրենեաց սահմաններէն թշնամի և սպառտակ ազգերն հարձական կը վանեն . բայց կը տեսնեմք միանգամայն, որ նոցա այն փառքն ու պատիւը մերձակայ և տարակայ ազգաց նախանձն ու տախլութիւնը իրենց դէմ կը շարժէ, ամեն կողմէն թշնամիներն գունդաբունջ Հայաստանի վերայ կ'արշաւեն, անըրբ խորամանկութեամբ հայն հայուն դէմ յարուցանելու և նոցա մէջ անմիաբանութեան և երկպառակութեան աշխարհաւեր սրտներ սերմանելու համար ամեն ճիգ կը թափեն և բաղմամբ ու անընդհատ յարձակումներով Հոյոց գտնն ու գաւաղանք կը խորտակեն : Հայաստան իւր ատուածասէր սրգւոց վարդապոյն արեւամբ կը ներկեն, նոցա նիւթական սլոժնն ու զօրութիւնը կը ջատեն : Բայց Հայն այսու չք յուսահատիր երբէք . քանզի քաջ գիտէր նա, թէ Ո՛րք միայն հայիւ կեցցէ մարդ, այլ և բանին Աստուծոյ՝ որ ելանէ ՚ի բերանց նորայ, այլ ՚ի սիրտ և ՚ի հոգի կը միանայ, եկեղեցականք և աշխարհականք, արք և կանայք, ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք, ամենքն առհասարակ զմի զինուորութիւն կը զինուորին, և Հայութիւնն համայն, իրբեւ Քրիստոնէութեան բաղմաւարչար վեկայուհի, աստուածային սիրոյ անպարտելի զօրութեամբ սգեւորուած անյինէնք առաքինութեամբ ընդ հուր և ընդ արիւն կ'ընթանայ, ամեն բռնութեանց, ամեն հողածանաց, ամեն բարբարոսութեանց կը դիմագրաւէ և մէն միայնակ Քրիստոնէութիւնն կը փրկէ Ղարեւիս : Հայն մարդկային ու

մեն օչնակամութենէ զրկուած , հե-  
 թանտական և անտիր-բրիտանիեան  
 արեւորբու ժողովութեանց , անդ ք  
 խորամանկութեանց և քառմնելի նեն-  
 դութեանց նշաւակ եղած , մի կողմէն  
 ժարտիրոսական իւրաւոր զահերով  
 և նահատակութեան արեան հեղեղ-  
 ներով Քրիստոնէութիւնը կը պաշտ-  
 արանէ ընդդէմ զբազաշտական ժող-  
 ւանդէ ժողովրդութեան , որ իւր  
 հարստահարութիւններով զՀայաս-  
 տան կը օտանէ եւ Արշակունեաց  
 հարստութիւնն իսպառօսպառ կը կոր-  
 ծանէ , միւս կողմէն իւր առարկական  
 Սուրբ Եկեղեցւոյ անտրատ կուսու-  
 թիւնն ու անկախութիւնը կը պաշտ-  
 պանէ ընդդէմ կրօնամուլ եւ նենգ  
 Յունաց , որ սոսկալի շարամտութեամբ  
 եւ գարաւոր ոտխտութեամբ անխնայ  
 կը խոշտանգեն զՀայաստան եւ ան-  
 պատմելի մոլեռանդութեամբ կը  
 ձգտին իրենց ձեռքն ու արարողու-  
 թիւնները մեր Եկեղեցւոյ մէջ մու-  
 ծանել , և ոչ միայն այդպիսի , այլ և կը  
 ժպրհին նոյն իսկ մեր անուսածապար-  
 գեւ լեզուի ուսումն արգելուլ յու-  
 նական բաժնի մէջ բռնազատելով  
 նորա անդ յունարէնն ուսանիլ , և նոզ  
 կրլի դաւաճանութիւններով Բագ-  
 րատունեաց հարստութիւնն բնաջնջ  
 կ'առնեն : Մի կողմէն Հագարացին  
 Հայն ՚ի մահմետականութիւն բռնա-  
 դատելով Հայաստանն հրով և սրով  
 կ'առնին , գեղադէմ երկտատարդներն  
 ու վայելագեղ կոյսերն կը գերեզմարե-  
 ծանբակչիւ և անտանելի հարկերով  
 Հոյաստան կը տախնայէ , միւս կող-  
 մէն փառամուլ Պասլի սեւադէմ ար-  
 բանակներն , անօրէն Աւնիթմար դա-  
 ւանտրանական տարապարտ վէճե-  
 րով , մարտարական հետամուտութեամբ  
 և կրօնակն երկիրստակութեամբ Հա-  
 յոյ մէջ յուղմուտը և խափութիւնն

10

կը սերտածեն , նոյա նիւթակամ և բա-  
 րոյական օյժն կը տկարացնեն , զնտա-  
 ՚ի Պաղատաւանութիւն կը ստիպեն  
 եւ Ռուբենեան հարստութեան հի-  
 մաւքն փոքելով նորա ձգնաճամն ու  
 կործանու մը կը վազվազեն :  
 Մի կողմէն իու ժագու թ Սկիւթացիք ,  
 անդու թ թաթարք ե անբարիչն Պաղ-  
 օնիք Տուղիլի , Արիստանի , Մէլիքա-  
 հի , Ջելպէտախի , Ջնիկիլսանի զ-  
 րտակտայ , Լանկիմուրի , Իահմադ-  
 պի , Եահաբասի , Դիմուրթաչի աւաջ  
 նորդութեամբ և միւս կողմէն Սարա-  
 կենսք և Թիւրքմէնք Հայաստանի մէջ  
 մահ ու աւեր կը սփռեն , գաւառներն  
 կ'առապտախեն , գիւղերն ու աւաննե-  
 րն կը գերբիեն , հիմնայտակ կը կոր-  
 ծանեն , քաղաքներն հրոյ ձապակ կոտ-  
 նեն , եկեղեցիներն մոխիր կը դարձը-  
 նեն , քահանաներն սրով կը կոտորեն ,  
 ոչ ժանկան կը խնային և ոչ ձերոյն ,  
 ոչ սգեղեաց տղայոց կը զման և ոչ  
 նոյա մորոց ազնուորմ արտատուայ  
 կ'ողորմին , զամսն սուսերահար և զը-  
 մանս մորթաղերծ կ'առնեն , զամսն  
 կենդանւոյն կը թնայեն և մնացեալներն  
 ՚ի գերութիւն կը վարեն , և բռնաշունչ  
 հողմոց մամսնելով աշխարհիս շոր կող-  
 մին ցիրե ցան կը սփռեն : Աերջապս  
 ինչ մի առ մի թուեմ , ՚ի մի բան , Հոյն  
 յամենաւտ կը հալածի , յամենաւտ  
 կը տագնայի և կը խոշտանգի . բոլոյ  
 իւր բոլոր յոյն ու հաւատարք Աստու-  
 ծոյ վերայ գրած , նորա անմահ սիրով  
 կը վառի , և իբրև ճշմարիտ աշակերտ  
 Քրիստոսի , ամենայն ինչ անկասկած կը  
 թողու , թագ ու թագաւորութիւն ,  
 աթոռ ու գաւազան , սրբուելիք ու  
 հայրենիք , երկրոյն փառք ու փառա-  
 ւորութիւն և Յիսուսի խաչին կը փա-  
 րի , Եկեղեցւոյ մէջ կամբանայ , Սուրբ  
 Գոթով կը զնի , Աւետարանաւ կը մը-  
 խիթարի և իւր պանդխտութեան մէջ

ամեն բանէ յառաջ իւր Եկեղեցին կը շինէ . Եկեղեցին , որ օտարութեան մէջ , բռնութեանց եւ հալածանաց մէջ , խորամանկութեանց ազգակուշ ջրհեղեղներու մէջ Հայուն միակ հայրենիքը եւ փրկութեան սասանը եղած է . Եկեղեցին , որ , ինչպէս տարեգրութիւնք մատնացոյց կ'առնեն , սոյն մեր յան եւ յիր եւ տառապեալ ազգին անբախ եւ հոգեւոր միութեան կեդրոնը , Հայութեան անմահ օգին , անբուն պահապանն ու հրեշտակը եղած է :

Մեծարոյ Հանգիստականք , ահա այսպէս մեր երջանկալիչատակ նախնիք եւ կեղեցականք եւ աշխարհականք ձեռք ձեռքի տուած համաշունչ գործակցութեամբ սոյն ազգալինջ մրրկաց եւ փոթորկաց մէջ կարողացան անարատ պահպանել մեր Եկեղեցւոյ Առաքելականդ եւ փրկարար վարդապետութիւնը , նորա շինող ճեսերն ու արարողութիւնները , իրենց աստուածպաշտութիւնն ու աստուածփրութիւնը , աղբութիւնն ու լեղուն . բայց ընդհակառակն սոյն լուսաւորեալ եւ խաղաղ դարուս մեջ մեք՝ նոցա որ դիքս , թուրացանք , վատթարացանք եւ մեր Նախնեաց այնչափ թանկագին զոհերով պաշտպանած եւ իրենց արեամբ նուիրագործած ու անարատ պահպանած հաւատքն ու կրօնը քունի մի բաղդափնդիր միտնարաց եւ մոլեռանդ պապականաց ձեռքն յանձնեցինք եւ մեր միութիւնը , որ մեր միակ զօրութիւնն է , կորուսինք եւ մասերու բաժնուեցանք եւ դեռ Եկեղեցին իրթնանալու եւ անշքանալու վերայ է , Եկեղեցին , մեր փրկութեան տասանը , համարեալ թէ խարստ կորուսած է իւր ճարտար ղեկավարներն , որք կ'արողացան անձնագիր շահատակութեամբ զմեզ հալածանաց մրրկոյցը Արիւնտափն մէջէն նուար-

կելով անվտանգ սոյն խաղաղ նաւու հանգիստն հասուցանել . համարեալ թէ այլ եւս չեն տեսնուիր մեր Եկեղեցւոյ մէջ հայրենասէր քարոզիչներ , աղդասէր բեմբասացներ , որք կը վառեն եւ կ'ողբեւորեն մեր Նախնեաց սիրտն ու հոգին աստուածային անմահ սիրով , որ աշխարհիս ամեն մեծութիւններէն գեր ՚ի վերայ է : Եկեղեցին այրիացեալ է սցմմ իւր եւ աղբի սիրով փեայացած վարդապետներէ , եւ պաշտօնեայներէ , ազգաշէն իշխաններէ եւ հայրենատենջ որդիներէ : Արցալիմ , կը մարմոթիմ , երբ այս խօսքերն կ'արտասանեմ , բայց ի՞նչ ընեմ , ճշմարտութեան առջեւ ըսելն յանցանք կը համարիմ :

Արդ համարեալ թէ ամեն ճող , ամեն ընտանիք , ամեն գերդաստան փոխանակ աստուածաւախ , առաքինի եւ ճշմարիտ Հայ ու հայրենասէր անդամներ նուիրելու , ըստ մեծի մասին ասունասիրտ , ապականեալ եւ անպարկեշտ անդամներ , օտարախորթ եւ անհարազատ Հայեր կընծայեն ազգին . որով ամեն ուրէք սկեպտիկեան , անզգայ եւ անբարոյական Հայոց թիւն կ'աճի ու կ'ըստուարանայ , եւ ընդ հակառակն զգայուն , օրտաղգած եւ բարեբարոյ Հայոց թիւն կը նուազի ու կը սպառի :

Եթէ մեք այս ամեն շարեայ խկական պատճառն ու աղբերակը անաշտութեամբ հետազօտեմք՝ նոյն խկ մեր արդի ամուսնական եւ ընտանեկան կենաց անբարութեան , վարուց ու բարուց արականութեան եւ պարտուց անգիտակցութեան մէջ պիտի գլուխեմք : Պիտի տեսնեմք , որ սցմմ մեր ընտանեաց հայրերն , փորրիկ բացառութեամբ , իրենց բոլոր ուշքն ու միտքը արբեցութեանց եւ ղեկիտութեանց դարձուցած են եւ իրենց ան-

ձը կօսականութեան, պարտամուա-  
ցութեան և մարդաջինջ մոլութեանց  
մասնամ, իսկ մայրերն սնտախապաշ-  
տութեան, յիմար զբօսանաց և նորա-  
ձեւութեան անձնատուր եղած, մն-  
ուացած են իրենց բարձր կոչումն ու  
պարտաւորութիւնը, անխոյժ են ի-  
րենց ընտանեկան բարեկեցութեան,  
իրենց որդեւոց սուրբ և մայրական կրթ-  
թութեան համար, ուստի եւ կագն  
ու կրուիւր, ատելութիւնն ու անհա-  
մոճայնութիւնը անպակաս են ամու-  
սիններու և ընտանիքներու մէջ, հե-  
տեւաբար և ազգին մէջ, Վասն զի  
աղբի մը երջանկութիւնը ամուսնա-  
կան և ընտանեկան կենաց երջանկու-  
թենէն կախեալ է: Նոյն իսկ ընտա-  
նեկան սիրոյ պտուղն է ճշմարիտ հայ-  
րենասիրութիւնն ու ազգասիրութիւ-  
նը, յարատեւ խաղաղութիւնն ու  
լուսաւորութիւնը: Վասն զի ամուս-  
նական և ընտանեկան կեանքն է մարդ-  
կային ընկերականութեան հիմն ու  
խարիսխը, և Քրիստոնէական բարե-  
պաշտութեան վաւարանն ու ջերմա-  
րանը:

Ամուսնութեան սուրբ խորհուրդը,  
որ մեր նախնիք համարած էին իբրեւ  
խոստովանութիւն, անքակ մութիւն  
և խաղաղութիւն սրտից, որով երկու  
անձնիք բարոյական ներգաշնակութե-  
մէջ կը մտնային, խաղաւ կորուսած է  
այժմ իւր բարձր նշանակութիւնը,  
իւր վեհ ու վսեմ նշաւակը: Սրդի  
երխտասարք, մեր յուսոց ծաղիկները,  
ըստ ամենայնի սոճնատիրութեան, զեղ-  
խութեան, եւ անժուժիրութեան  
մարդածախ կեոց անձնամատն լինե-  
լով՝ սկսած են փոխանակ մեր նախ-  
նեաց նման ՚ի ժամանակին ամուսնաւ  
նալու, իրատ անազան ամուսնանալ  
և փոխանակ իրենց ամոններէն պար-  
զութիւն, համեատութիւն, ընտիր

վարք ու բարք եւ առաքինի կեանք  
պահանջելու, մեծագումար գրամու-  
ժիտներ պահանջել, գրամն նախամե-  
ծար համարելով հոգեկան արժանաւ-  
ւորութենէն, որով օր ըստ օրէ նորա-  
սէր, լիտի, տնաւեր, եւ խառնակեր  
աղջկանց թիւն կը բաղմանայ, և ընդ-  
հակառակն ամոթիւրած, աշխատասէր,  
պարզակեաց, անաշէն և հայաստ հա-  
յուհեաց թիւն կը նուաղի. հետեւա-  
բար մեր ընտանեկան կեանքն օրէ ցօր  
իւր բարձր նշանակութիւնը, իւր վը-  
սեմ կոչումը կը կորուսանէ, կը նուաս-  
տանայ, Հայոց թիւն կը նուաղի, հա-  
սարակութիւնը կ'աղքատանայ, ժո-  
ղովուրդը յետին թշուառութեան,  
բարոյական ապականութեան եւ կո-  
րրստեան խաւարի յատակն կը խորա-  
սուղի, և եթէ այսպէս շարունակի,  
կը նուաղի և անկասկած յեղձամիջ-  
ձուկ կը կորնչի:

Ինքնայայտ ճշմարտութիւն մի է  
այս: Համազգային պատմութեանց,  
տիեզերական տարեգրութեանց մէն մի  
էջերուն մէջ մերկայաբանոց կը տես-  
նուի, որ ամեն աղբի փառաց ու պար-  
ճանաց, բարգաւաճութեան և յարա-  
տեւութեան դիտաւոր պատճառը ըն-  
տանեկան կենաց բարոյականութիւնն  
եղած է միշտ. իսկ կործանման և չը-  
քութեան պատճառը բարուց զեղ-  
ձումն ու ապականութիւնը: Քացորոշ  
կը տեսնուի, որ ամեն ժամանակի մէջ  
ազգաց ու ազանց բարօրութեան եւ  
երջանկութեան հիմն ու պատճառը  
ամուսնական սրբութիւնն եղած է յու-  
ւէտ. վասն զի ինչ տեղ ամուսնութե-  
սուրբ խորհուրդը, որ առաջին յօդաւ  
կասին է մարդկային ընկերականութեան,  
սրբութեամբ չը պահպանուի, չը կայ  
այն տեղ ոչ ընկերութիւն, ոչ որդիա-  
կան սէր, ոչ արենակցաց համակրու-  
թիւն, ոչ աղբութիւն, հեռեւսբար

և ոչ հայրենիք, Յայտարար կը տեսնուի թէ՛ կայսրութիւնք, բաղարք, հասարակութիւնք եւ ընտանիք պահպանուած են և կը պահպանուին մի միայն բարոյագիտութեան վերհարար ազդեցութեամբ եւ նորա ցոյց տուած առարկնական ուղղութեամբ, եւ թէ՛ ժողովուրդի մը յողմահարին ու իւր սրա կործանիչ արտաքին թշնամեաց անհամար զօրախումբերէն և ահարկու ազգամթերներէն աւելի իւր ներքին սպառնալից թիւեր, անմիաբանութիւնը և բազմադիմի միջութիւնքն եւ զամենն որք անցագ ազգուկներուն ման կը ծծեն նորա ոյժն ու զօրութիւնը, կը խլեն նորա մութեան յոգահարները, անդամները զիրուցանկաննն, եւ նորա մահն ու վախճանը կը վութեացնեն ՚ի հաստատութիւն այն հայկական առածի անխոր ճշմարտութեան թէ « Զուն մի չը կործանիր, բայց եթէ ինքն իւր մէջէն » :

Աւերորդ կը համարիմ այս մասին օրինակներ յառաջ բերել. վասն զի ՚ի բայ առեալ հին ազգերն, եթէ կամի ամեն ընտանիք սորա ճշմարտութիւնը կարող է նոյն իսկ իւր մէջ տեսնել :

Յեծարոյ Հանդիսականք, ահա այս ամենէն յայտնապէս տեսնուեցաւ թէ որչափ հեռի կը գտնուիմք մեր մեր նախնեաց առարկնութիւններէն և բարեմասնութիւններէն տեսնուեցաւ թէ՛ նորա այն հարածանայ և բռնութեանց ժամանակամիջոցին մէջ ՚ի նշագէս անարատ պահպանեցին իրենց հայրենի կըրօնն ու Նկեղեցին, աղբութիւնն ու լեզուն, և թէ մեր այս խոզաղ և աղաս դարուս մէջ ՚ի նշագէս մեր մայրենի Նկեղեցիէն խորդայանք, մտներու բաժնուեցանք, մեր ազգային լեզուն ու գեղեցիկ ստորութիւնները բարձրութեւ ըրինք եւ գովանի յատկանիւններն ու կատարելութիւններն կրուսինք և

և օտարացանք, Տեսնուեցաւ միանգամայն, որ այս ամեն շարեաց, յետադիմութեանց եւ թշուարութեանց բուն պատճառն ու աղբերակը ամուսնական և ընտանեկան սիրոյ սպառնալից թիւնն ու ցամաքումն է, և սիրոյ ցամաքումն ևւս հարց և մարց, նա ժողովանդ մարց անդատարակութեան եւ խորին տղխութեան արգասիքն, վասն զի կինն է ընտանեաց անկիւնաբարբ :

Աւրեմն, Տեղորդ իմ և Տիկնայք, եթէ կը լիտարիմք մեր նախնեաց հարգատ որդիներ լինիլ, նոյս վաստայ ու սրաքմանայ ժառանգ հանդիսանալ, եթէ կը ցանկամք մեր առարեղաւ տնոց դաւանութիւնը, մեր նախնեաց անդին և անփոխարինելի աւանդը, մեր աղբութեան, մեր հայրենի օրինաց, դու վանի ստորութեանց և լեզուի միակ պահարանը, Նկեղեցին բարեղարգել և հաստատուն պահպանել, եթէ կը ցանկամք աղբատեր և հայրենասէր եւ կեղեցականներ ունենալ, որ կարող լինին վերանորոգել և զարթուցանել ՚ի մեզ այն առարկնութիւնը, այն հայրենի կրօնասիրութիւնը, որ ոչ հուր, ոչ սուր, ոչ հալածանք և ոչ տքարանք չը կարողացան մեր նախնիքներէն կողոպտել ու յափշտակել : Աւերջապէս եւ թէ կը ցանկամք բարոյականութեամբ զարգանալ, բարի և առարկնի ազգ մի լինիլ, սէտք է դուն դործելք, աշխատիմք գիշերաջան արնողութեամբ մեր երջանկայիշատակ նախնեաց նման մեր քոյրերն ու աղջիկներն ըստ օրինի կրթութիւնը թե աղբութեանց ու դատարակեալ մայրեր ունենալ, կրթեալ բրիտանեական բարեպաշտութեան մէջ, կրթեալ բարոյական արնուութեան մէջ, կրթեալ ազգային և հայրենասիրական հոգւով : Վասն զի կրթեալ մայրերն իրենց որդւոց հոյ, այն հետ կը խօսին, նոյս մը

տոյց հետ սիրան եւս կը մշակեն ու կը լուսաւորեն, ներքին մտորդն արասրին մարդոյն հետ ներդաշնակ թելերով կը կապեն, նոցա հոգւոյն մէջ առաքինութիւն և բարեպաշտութիւն կը սերմանեն, նոցա մատաղ սրտին խորը Հայրենասիրութեան և ազգասիրութեան սրբազան հուրն կը վառեն ու կը բորբոքեն և մարդկութեան բարի և առաքինի քաղաքացիներ կը նմայեն :

Քայց ցաւ է մեզ ասել, որ այժմ մեր դպրոցները, նա մանաւանդ օրիորդաց դպրոցները, բոտ մեծի մասին թիւր ու մոլոր ընթացից մէջ կը գրունուին. նոցա մէջ փոխանակ հայկական լեզուն ուսուցանելու, մեր լքիստոնէական հաւատոյ անարատ դաւանութիւնը, մեր առաքելական եկեղեցւոյ և ազգի պատմութիւնը, մեր երանելի նախնեաց քաջագործութիւնքն ու փառքը դասախօսելու, օտար լեզուաց քանի մի բառերու թօթոլումն կ'ուսուցանեն, և աւելի խաղալու և դաշնամուր զարնելու մէջ կը կրթեն. փոխանակ ուսեալ հայրեր, կրթեալ եւ տանտիկին մայրեր պատրաստելու, իմաստակ և թռուցիկ երիտասարդներ եւ օտարամուղ գերասանուհիներ կը պատրաստեն և զմեզ բարոյական ապականութեան բերանբացանդունդին եզրը կը մղեն, և գուցէ փոքր միւս ևս դահալէժ կորնջիմք :

Արդ՝ ժամ է սթափելու, ժամ է արթննալու, այլ ևս պէտք է մեր անտարբերութիւնը ՚ի բաց թօթափելով սոյն կորստաբեր դրութիւնն վերի վայր շրջել, մեր դաստիարակութեան և լուսաւորութեան շէնքը պարտաձանաչութեան եւ պարտակատարութեան հաստատուն հիման վերայ զետեղել և բարոյականութեան պատուանդանի վերայ բարձրացնել. վասն զի մեր ազգի հոգեւոր միութեան միակ կասն ու

յօղը բարոյականութիւնն է, բարոյականութիւնը միայն կարող է մեր ազգի քայքայեալ անդամներն կապակցել, մեր ազգայնութիւնն ամբողջել և մեր առջեւ յառաջխաղացող թեան լացնածաւալ ասպարէզ բանալ :

Սիրելի Հանդիսակիմք, ՚ի վերայ այս ամենայնի պէտք է քաջ իմանալք այս անառաւ ճշմարտութիւնը թէ՛ մինչեւ որ մեր ազգը բարոյապէս չը զարթնուի, զօրաւորն տկարին ձեռնաու չը լինի, հարուստն իւր լիութեամբն աղքատին պակասութիւններն չը ցուցանի, ուսումնական անուսին չը մերձանայ, նորա խաւարին գաղափարներն չը լուսաւորէ, բարոյականն անբարոյականին օչնութեան չը փութայ, դոյն աստիանութեան անդունդէն չը հանէ, մեր ազգի համար չը կայ ոչ մի արանութիւն, ոչ խաղաղութիւն, ոչ ճշմարիտ լուսաւորութիւն, հետեւապէս և ոչ երջանկութիւն :

Ահա այս ամենն իմանալով մեր ազգի փոյթն ու եռանդը պէտք է լինի ուրեմն դպրոցներն բարեկարգել, առաքինական ուղղութեամբ զարգանալ և բարոյական միութեամբ ամրանալ, որով միայն կարելի է պահել մեր երկնային կրօնն ու դաւանութիւնը, մեր մայրենի լեզուն ու եկեղեցին, մեր ազգային կատարելութիւններն ու գեղեցիկ սովորութիւնները, մեր գոյութիւնն ու ազգութիւնը, և լինել ազգառաքինի, աղք կրօնասէր և ազգ երջանիկ :

Մ. Ս. Յակոբեան :

Հետեւեալ ոտանաւորը Ալեքս. լուէն մեզ զրկուած և սաստիկ թախանձանօք հրատարակութիւնը խոր գրբուած է :